ԲԱԺՆԵԳԻՆ
Ի Պուլկարիա
Տարեկ. 10 Ֆր
Վեցամս. 5 »
Արտասահման
Տարեկ. 12 Ֆր.
Վեցամս. 6 »
Ամերիկա
2 Տոլ. 30 սենտ
ԿԱՆԽԻԿ

ԶԱՅԵԼԻ

ՊԱՏՄԱՆԵՔ
Գրութիւնք ետ չեն տրուիր։
Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱԲԱԹԱՀԱՆԴԵՍ · ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏՍԿԱՆ

Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

Ե. ՏԱՐԻ — ՄԱՐՏ. 3 ՇԱԲԱԹ 1901 — ԹԻՒ 202

ԱԶԳԱՅԻՆ

ՍԽԱԼ ՔԱՑԼ ՄԸ

Վառնայի Որբախնամի Գործ. Ժողովոյ կողմէ շրջաբերութեան ելած սիկարի թուղթի առթիւ գրկուած է մեզ ծանուցում մը կոր պարտաւոր ենք չհրատարակել, նկատելով որ Որբախնամի այդ արարքը՝ Ազգին տան (Ազգ. Հիւանդանոց) 1500է աւելի պատսպարեալներուն սեպհական սիկարի թուղթին կը ՁՆասէ և ասով ամենուս սրտին խորին ցաւ պիտի պատճառէ։ Ուստի կ'առաջարկենք որ Որբախնամը իր այդ անհեռատես ձեռնարկէն հրաժարի։

Լսածնուս նայելով, Որբախնամի սոյն արարքին շարժառիթ տուող պարագան սա է եղեր որ, մէկ քանի ծխավաճառներ, որոնք Որբախնամի կ'անդամակցին, Ազգային Հիւանդանոցի թուղթէն քիչ տասանորդ առնելնուն համար այս ազդաշէն (?) դաղափարը յղացեր են։

Բոժ. —Ճշմարիտ ազգասիրութիւնն ալ ասանկ ըլլալու է։

ՊԱՐՍԻՑ ՇԱՀԻ ՖԷՐՄԱՆԸ

Հետեւեալը թարգմանութիւնն է այն ֆէրմանին, զոր Մուզաֆֆէրէտտին Շահը վերջերս շնորհեց Պարսկահայոց, բարձրագոյն դպրոցներ բանալու համար.

«Այն օրէն, երբ Ֆէյան փառահեղ թագաւորների գահը և Իրանի կայսրութեան Շահնշահութիւնը մեր օգոստափառ անձնաւորութեան վիճակվեց, իբրև երախտագիտութիւն առ Աստուածային Նախախնամութիւնը, մենք տարածեցինք մեզ շնորհած ողորմութեան ճառագայթները մեր կայսրութեան բոլոր բնակիչների վրայ, ինչ ազգի և ցեղի ու կրօնի պատկանէին նրանք, և ամենքին հայրենիքի որդիներ համարելով՝ ամեն առիթով և ամեն պարագայում նրանց բարգաւաճման համար ոչինչ չխնայեցինք։ Ցոյս ունենք, որ ամենակարող Աստուծոյ օգնութեամբ աւելի քան ցարդ վայելելով երկնային օժանդակութեան շնորհը մեր այս սուրբ պարտականութեան մէջ աւելի աջողութիւն գտնենք։

«Եւ այդ, մի բան, որ մեր սրտի բարի իղձերի հետ կատարելապէս համապատասխան է, այն է, որ մեր կայսրութեան Հայ ազգաբնակութիւնը, որ հին ժամանակներից ի վեր բնակած է առ ոտս Պարսից արքայական գահի, և որը մշտական հաւատարիմ հպատակութեան և հայրենասիրութեան ապացոյցներ է տուել, այժմ մտադիր է իր դպրոցների թիւն աւելցնել և Թէհրանում, Դաւրէժում և Պարսկաստանի այլ գաւառներում հաստատել մի քանի կենտրոնական նշանաւոր դպրոցներ և այս առիթով մեր Օգոստափառ Վեհափառութիւնից արտօնութիւն է խնդրել այդ դպրոցների բացման համար։ Հայերի այդ նպատակը մեր սրտաբուղխ փափաքների հետ համաձայն գտնելով և նկատելով որ այդ նպատակը մեր հրպատակների առաջադիմութեան պատճառ պիտի դառնայ կրթութեան, արհեստների և երկրագործութեան ասպարէզներում, և վաճառականութեան զարգացման մղիչ պիտի հանդիսանայ, սոյն հզօր արքայական ֆէրմանով շնորհում ենք նրանց արտօնութիւն՝ Պարսկաստանի Հայոց դպրոցների բացման համար, և այդ դպրոցները մեր մասնաւոր հոգածութեան և պաշտպանութեան

տակ առնելով՝ հրամայում ենք որ այն գումարները, որոնք այդ ձեռնարկութեան համար յատկացվելու են, գործադրվեն նոյն գործի ձեռնարկողների և հոգաբարձուների մշակելիք կանոնադրութեան համեմատ որոշված ծախսերի համար։ Ընդհանրապէս բոլոր հաստատված դըպրոցները մեր արքայական անձնաւորութեան պաշտպանութեան տակ դնելով, հրամայում ենք որ մեր բոլոր պաշտօնեաները ամեն տեսակ աջակցութիւն և օգնութիւն նուիրեն նոյն սուրբ գործի աջողութեան համար։

Տրված Րէջէբ ամսին 1318 թուի։

Ամենիա

——

Բարիզէն կը գրեն մեզ թէ Ն. Բարձրութիւն Իշխան Լուսինեան իր վերջին հեղինակութիւնն եղող հոյակապ Ֆրանսահայ բառարանէն բացի այլ և այլ հաստատութիւններէ և թանգարաններէ 20 օրինակ ալ Կիպրոսի Ազգային Որբանոցին նուիրեր է։

——

—Դարձեալ Բարիզէն կը գրեն թէ Ն. Ս. Օծութիւն ամենայն Հայոց Ս. Հայրապետը լանջախաչ մը նուիրեր է Արժ. Սուքիաս Վ. Պարոնեանի (Մանչեսթրի և Բարիզի երբեմնի հոգևոր հովիւ) ի վարձ իր մատենագրական աշխատութեանց։

Ն. Ս. Օծութիւնը՝ Հայ եկեղեցւոյ արժանաւոր մէկ կրօնականն ալ վարձատրած պիտի ըլլայ, եթէ բարեհաճի լանջախաչով մը և ծաղկեայ փիլոնով մը պատուել՝ Բարիզի Հայոց Հոգևոր Հովիւ Արժ. Տէր Վռամշապուհ քահանայ Քիպարեանը, որուն աշխատութիւնները ամենէն աւելի Ն. Ս. Օծութիւնը ինքն գիտէ։

——

—Բարեյիշատակ Եղիազար Մուրատեանի հեղինակած «Քննական Պատմութիւն Արշակ Բ.ի և անոր Պապ որդւոյն» անուն երկասիրութիւնը այս անգամ լոյս տեսած է Աղեքսանդրիոյ «Արաքս» նորահաստատ տպարանէն և կը ծախուի ի գին 2½ ֆրանք։ Պուլկարիոյ և Ռումանիոյ մէջ ըստանալ փափաքողք դիմելու են մեր խմբագրութեան։

——

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

——

Վառնա 29 փետր. 1901

. . . Խմբագիր,

Սիլիստրէէ վերադարձիս երբ Տոպրիչ հանդիպեցայ, մէկ քանի վստահելի անձերէ լսեցի հետևեալ անախորժ դէպքը.

Ինչպէս շատ մը քաղաքներու, նոյնպէս և տեղւոյն Պուլկահայուն ինքզինքը չդիտցող կարգ մը անձանց բերնի—ծամուց դարձած է եղեր «Ստամպօլլու տէյի՜լ միսինիզ...» յանկերգը. ահա այս խօսքը եղած է պատճառ կռուի մը որ հետևեալն է։

Ներկայ Թաղ. Խորհրդոյ անդամներէն երկուքը տեղացիներու սովորութեան համաձայն բարեկենդանի նախորդ շաբաթու օրերէն մէկին իրիկունը կը դիմեն գինետուն, ուր քանի մը հոգի Պօլսեցիներ ալ կան եղեր կանուխէն եկած (բողոքականի պսակուելուն առթիւ եղած լեզուակռիւները ու մինչ իսկ տեղական թերթի մը միջ այդ մասին գրուած յօդուածը ծանօթ են ձեզ), կսկսին այս խեղճուկ թաղականները իրենց նստած սեղանէն դէպի Պօլսեցիներուն սեղանը, ինչպէս կըսեն ռամկօրէն, հարմ նետել նոյն թերթի գրուածքը ակնարկելով, որովհետև անոնցմէ մէկէն կը կասկածին. կասկածի ակնարկներն հետզհետէ սուր կերպարանք կառնայ, բնականաբար գլուխներն ալ կը տաքնան։

Խորհրդոյ անդամներէն մին կըսէ որ (Տաճկ. Պուլկ. և այլ ազգերու ներկայութեան թուրքերէն), Պօլսեցիները մենք մարդու տեղ չենք դրած այլ է...ու, և երբ ընտրութեան ժամանակ և կամ ուրիշ առթիւ նամակ կը ղրկենք պատճառը քանի մը դրամ չորթել է. անանկ է նէ կը պատասխանէ կասկածուած Պօլսեցին ձեր խորհուրդը և կամ ժողովն ալ է...ու ժողով է որուն կը նախագահէ ձեր պատուարժան արարածը. որմէ յետոյ կսկսուի հետզհետէ մէջընդմէջ կծու ակնարկութիւններ թէ իրենք կերակրած են գաղթականութիւնը (այս տեղի) թէ սանկ նանկ ու չգիտեմ ինչեր...։ Դագարներուն ալ «չարշըլըմա»ներ խաղալ չեն մոռնար մեր մեծ ազաները սրունքներնուն մէջ առեր առած։ Հուսկ ուրեմն երբ կը կրնուին նախորդ խօսքերը՝ Պօլսեցի տաք գլուխներէն մին, ալ ինքզինքը կատարելապէս անպատուած համարելով կը ցատկէ տեղէն ու կերթայ քովերնին կըսէ «Որու որ ակնարկել կուզէք խօսքերնիդ միայն անոր հասցէին ուղղեցէք և ոչ թէ ամբողջ Պօլսեցիներուն». Անոնք կատղած իսկոյն վրայ կը վազեն ծեծելու

զայն, ան ալ ինքզինք պաշտպանելու համար սեղանին վրայ գտնուած սիկառ վառելու պղնձէ կրակամանը առնելուն պէս առաջին յարձակող խորհրդոյ անդամին ալ այտին ու ճակտին մէջտեղին կը փակցնէ. այս վերջինս անմիջապէս կը փոխադրեն դեղարան ուր կապել կուտան վէրքը ու բոլոքագիր մըն ալ կը ներկայացնեն կառավարութեան։

Քաղաքէն մեկնելու պահուս իմացայ որ դատարանին կողմէ կոչնագիրները ղրկուած են։ Ինչ որ ալ ըլլայ դատին ելքը, միշտ մեզի համար անպատուաբեր է։

* * *

ԹՐՔԱԽՕՍ ՀԱՅԵՐՈՒՆ

Մեր մէջ ամենէ աւելի տգեղ երեւոյթներէ մին ալ թրքախօսութիւնն է։

Գիտակցօրէ՞ն թէ անգիտակցօրէն կը սիրենք խօսիլ այդ բարբառը, մանաւանդ անանկ երկրի մը մէջ, ուր ազատութիւնը մեզ կը թոյլատրէ ընել մեր փափաքածը, խօսիլ, գրել, անկախ կերպով, նոյն իսկ կը քաջալերէ զմեզ յառաջանալ ազգօգուտ ձեռնարկներու մէջ։

Գիտեմ, պիտի պատասխանեն ինձ թէ նախ թերթերը թող դադրեցուցեն տաճկերէն բաժինի մը գոյութիւնը։

Այս պատասխանը խիստ ալդարացի պիտի ըլլար եթէ մեր մէջ չը գտնուէին հին սերունդի այն թրքախօսները որոնք օրէ օր դէպի ծերութիւն կը դիմեն և ասկէ վերջը անոնց համար հայերէն սորվուիլը անկարելի դարձած է. ասկէց զատ, եթէ թերթերը իրենց մէկ մասը տաճկերէնի յատկացուցած են, անդին մնացեալ երեք բաժինները հայերէն կը գրուին, ուրկէ կրնան օգտուիլ հայերէն չը հասկցող թրքախօսները։

Իմ այս գրութիւնը կուղղեմ այն բոլոր հայերուն որոնք հայերէն գիտնալով հանդերձ՝ տաճկախօսութիւնը կը նախընտրեն միշտ.

Ու չեմ սխալիր եթէ ըսեմ թէ մեր մէջ շատեր տաճկերէն կը խօսին միմիայն հաճոյքի համար, այն լեզուին տեսակ մը եսական բառերը ղիրենք գրաւած են, ինքզինքին մասամբ մը յանդուգն կամ գոռոզ կզգան գործածելով այն բարբառն իր այլանդակ եսամոլութեամբ։

Ազգասէր մը չկրնար առանց սոսկման գիտել թրքախօսութեան վնասակար երեւոյթը որ ահեղաքայլ կը տարածուի մեր մէջ, ուր որ ըլլաս կը տեսնես հայերէն գիտցող ազգակիցներ որոնք տաճկերէն կը խօսին. սրճարաններու, զբօսավայրերու, փողոցներու և մինչև իսկ եկեղեցիներու մէջ, որոնց խօսուածքը մայրենի լեզուն պաշտողներուն սիրտերը կարիւնոտեն։

Մարդս ցաւօք կը գիտէ յաճախ թէ, տան մը մէջ մեծէն մինչև պզտիկը տաճկերէն կը խօսին, թէեւ կը գտնուին այդ ընտանիքներու մէջ երիտասարդներ որ հայերէն բաւական գիտեն, այլ տաճկերէն ճոռոմելով կը մոռնան այն մեծ պարտականութիւնը հանդէպ փոքրերուն որոնք բնականաբար հետեւելով իրենց մեծերու օրինակին, վաղը մէյմէկ թրքախօսներ պիտի ըլլան։

Եզրակացնելով խօսքերնիս կը յայտարարենք թէ սոյն թրքախօսութիւնը երբէք պատուաբեր չէ և չկրնար ըլլալ թէ արդի և թէ ապագայ հայ սերունդին համար։

ՀՐԱԿՆ

Պաշտօնական ծանուցում

Ինիկ Կապան–Մատէնցի միհանաճի Մկրտիչեան Պետրոս 30 տարեկան, սպիտակամորթ, միջահասակ, ոսկեհեր և խաժակն, ինչպէս նաև իր եղբօրորդին Գրիգոր 25 տարեկան, միջահասակ, թխագոյն, սեւաչեայ, սեւահեր և ծաղկահեր դէմքով, երկար ժամանակէ ի վեր իրենց հայրենիքէն մեկնած լինելով՝ կատարելապէս ստուգուած է որ այժմ Պուլկարիոյ սահմանաց մէջ կը գտնուին։

Կը խնդրուի մեծարգոյ ազգայիններէն որ եթէ վերոյիշեալ Պետրոսի և Գրիգորի ուր ըլլալնին գիտցող կայ, բարեհաճին ընդ փոյթ իմացընել մեզ, Ազգային Պատրիարքարանի տեղեկագրելու համար, ուսկից ստիպողաբար յանձնարարուած է մեզ։

Մնամք աղօթարար Ազգիս

Այցելու Հովիւ Հայոց Պուլկարիոյ

Բարթուղիմիոս Ծ. Վ. Պաղճեան

24 Փետր 1901

Ֆիլիպէ

——

ԴՐԱԽՏԻ ՓԵՍԱՆ

Ժամանակն գիշեր էր. եւ խոր գիշեր. աստղերը լուսաՀանդէս ունէին, որոց կը Նախագահէր լուսնակն՝ իրենց Թագուհին։

Այլ կողմս սակայն սքանչելի տեսարան մը կար բացուած. Հոն մութ չկար. լոյս էր ամեն կողմ ծաղիկ ամեն կողմ, Թռչնեկաց Հոգեզուարճ դայլայլիկն խառնուելով վտակաց քաղցրաձայն խոխոջին, Նոր Հրաշալիք մը կածէին ի Հանդէս։

Այս տեսարանին շուարած՝ յափշտակուած կը Հայէի, ուր սիգալով կը ճեմէին մարդ մը ու կին մը։

Ասոնք ամեն մարդէ կատարելագործեալն, ամենէն գեղեցիկն և ամենին երանելին էին։

Հարցուցի,—ո՞ւր ենք մենք, եւ ո՞վ են ասոնք։—

Ըսին դրախտին քովն ենք, եւ այն զոյգ ամոլները Ադամն ու Եւան են, զոր պսակադիրն Աստուած միացուց իւր Աստուածային կնքահայրութեամբն, որու Համար Ադամ խոստովանելով ըսաւ, «այժմ սա ոսկր յոսկերաց իմոց, և մարմին ի մարմնոյ իմմէ, սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ»։

Հարսնիքը լմնցած էր, եւ մեղրալուսինը ճիւնաթոյր ամպով մը անցաւ դրախտի լուսապայծառ Հորիզոնէն, եւ մարդկային ազգի դատակնիքը ձգեց Հոն։

Աստուած մարդկային ազգի այս Հրաշալի սկզբնաւորութիւնը տալէ ետև քիչ մը Հանգիստ ընելու Համար Հեռացաւ, եւ իւր Նախաստեղծին վիճակը Հեռուէն դիտելու Համար ծրարուած էր լուսաշող ամպերու մէջ, և անկէ կը դիտէր իւր Նախաստեղծ մարդուն խանդավառ կենցաղը։

Ադամ՝ որ բնութեան ամեն օրինաց ենթակայ էր, օր մը տենչանօք Նայեցաւ չքնաղագեղ Եւային, և գնաց վարդի մը թուփին տակ Եւային քովիկը Նստելու։

Նկատելով որ գեղեցկութեան կատարելութիւնը կը փայլի Հոն,—ըսաւ, Եւա՛յ քիչ մը քովիկս եկուր»։

Եկո՛ւր. եկո՛ւր, քիչ մ'ալ եկո՛ւր։

Աւելի եկո՛ւր։

Եւան որ Աստուծոյ Հրամանաւ պարտաւոր էր իր էրկանը Հնազանդելու, այնպէս ըրաւ, եւ գնաց Ադամ աղային քովը Նստաւ.

Ադամ չը դիմանալով Եւային Հրապուրիչ գեղեցկութեանը, քիչ մը սեղմեց, և բաւական չը սեպելով ձեռքը երկնցուց և ազդրին սատիկ կսմիթ մը տուաւ։

Կսմիթը անդրանիկն էր, և Եւան դեռ չէր վարժած այն կսմիթին, մէկէն ի մէկ—ո՛ւֆ— պոռաց. Ադամ, կերեւի թէ Համով եկաւ իրեն, իր կսմիթները շարունակեց, Եւայի կսկծալի ձայներուն կարեւորութիւն չը տալով։

Եւան՝ ինչպէս ըսինք կսմիթի վարժ չ'էր, սկսաւ բարձրաձայն աղաղակել. Աստուած որ ակընդէտ կը Նայէր իւր բարիծաղիկ Նորաստեղծներուն վրայ, եկաւ ամպով, (որովհետև վերը լաճso չկար) և բաւական բարձրացած Հարցուց. «Ադա՛մ, չե՞ս ամչնար. ի՞նչ է ըրածդ»։

Այս պարագային մէջ ով որ ալ ըլլայ կը շփոթի, Ադամ ինքզինքը ժողվեց, և ըսաւ, Տէր Աստուած, ինծի տուած ընկերիդ Հետ կատակ կընեմ կոր։

—Ես անի քեզի կատակ ընելու Համար չը տուի։—

—Բայց ուրիշ բան մ'ալ չըսի՛ք, կրնայի՞նք անբանի պէս իրարու երես Նայիլ, բնական է որ կատակ մը պիտի ընէինք, և ըրինք։

—Գահիրէի մէջ կսմիթի կատակը գրեթէ մեծ մասամբ ամէն օր կայ, Հոն սովրեցայ։

—Որովհետև այս մեծ մեղքը գործած ես, պէտք է որ դժոխք երթաս քաւելու Համար։

—Լաւ կերթամ, սա իրաւամբ որ ամեն կսմիթ տուողներ ալ Հոն երթան, որոց մէջ շատ մը բարեպաշտ տէրտէրներ, շատ մը Աստուածապաշտ վարդապետներ, և շատ մը եաղլաւ եպիսկոպոսներ կան, ուր՝ տեղ ալ չպիտի գտնանք Նստելու։

—Այո՛, անոնք մեղաւոր են, ես անոնք պիտի պատժեմ. (եթէ կրնաս) բայց դուն պէտք է դժոխք երթաս, վասն զի կսմիթ տուած ես տնմեղ Եւային։

—Լաւ. Աստուած, դուն ալ Մարիամ Մագթաղենացիին կսմիթ տուիր, երբ ոտքերուդ վրայ իւղ կը թափէր, ինչո՞ւ քեզի Համար ալ դժոխք, եւայլն չը գրեցիր, «ես որովհետեւ . . .։

Ահա այդ է որ մեր ամեն իրաւունքը ոտնակոխ ըրաւ ու պիտի ընէ։»

ԳԱՀԻՐԷ Ս. Փ.

Բ. Գ. ՀԻՆՏԼԵԱՆ

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պուլկարերէն լեզուի

Գին 1 ֆր.

Դիմել Հայելիի խմբագրութեան։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

ՈՐԴԵՍԷՐ ՀԱՅՐԵՐ

Անկեղծօրէն պէտք է խոստովանիլ թէ շատ անգամ մարդէ մը շատ աւելի արժէք ունին մարմարակերտ արձանները․ օրինակի համար, Փեթիասի կամ Միքէլ—Անժի յօրինած հրաշակերտ մէկ արձանը այսօր հազարաւոր ոսկի կարժէ, մինչդեռ կը գտնուին այն տեսակ ընտանեաց հայրեր որ խօսուն և շարժուն ըլլալով հանդերձ կուտ մը անգամ չեն արժեր, իրենց զաւակաց բարոյականը խանգարելնուն պատճառաւ։

Այս կարգին կը պատկանին նաև այն հայրերը որոնք սովորութիւն ըրած են իրենց հինգ վեց տարեկան տղաքը կամ աղջիկնին հետերնին գինետուն տանիլ, առարկելով որ այդ մանուկները տան մէջ հանդարտ չեն կենար. իբր թէ գինետունը վարպետ տուտուներնուն ծաղկոցը եղած ըլլար։

Անցեալ շաբաթ գիշեր երկու բարեկամներ՝ որոնց մին ձեռքը լեցուն թաշկինակ մը ունէր, ժամը 6ին առեններ շուկայէն ելլելով, փոխանակ ըստ սովորականին Մուսալլա Սարաքօստային գինետունը մտնելու, Պարսիկին սրճարանին առջև իրարմէ զատուեցան։

—Ուշ չը մնաս հա՛։

—Չէ․ սա ձեռքինս ձգեմ պիտի գամ․ դուն չիտակ Վարսամօղլին կերթաս կոր եա՛։

—Եկու աս իրիկուն ալ Պետիկին երթանք։

—Էյ բէք աղէկ․ դուն գնա նստէ, մեզեները չտկել տուր, ես ալ հիմա կուգամ։

Այսպէս մէկը ձեռքի թաշկինակը տուն ձգել գնաց, միւսն ալ Պետիկին գինետունը, ուր սեղանի մը առջև նստելով, ափ մը քեօնպէֆի տուաւ սպասաւորին որ մօտակայ սրճարանէն երթայ կիլլակ մը լեցնէ։

—Ինծի նայէ տղաս, Նարկիլէն աղւոր մը լուալ տուր. վրայի կրակը մեծ ըլլայ։

—Դուն անհոգ եղիր, մեր ձեռքէն աղտոտ բան չելլար։

—Է հայտէ քեզ տեսնեմ։

Հազիւ թէ քանի մը վայրկեան անցած էր, տուն գացող բարեկամը գինետունէն ներս մըտաւ, հետը ունենալով հինգ վեց տարեկան գեղեցիկ աղջիկ մը, որուն ձեռքէն բռնած էր։

—Քա Մաննիկ, աս դուն կէնէ եկար։

—Եկաւ ամա, խօսք տուաւ քի աս գիշեր խելօք պիտի նստի։

—Պարոն Պետիկ, մեր չիչէները ղրկէ նայինք։ Աս իրիկուն ի՞նչ մեզէ կայ։

—Թասուլեա բէյազի, միտեա բլաքիսի, բատիկեա սալաթասի, լահանա թուրշի, զէյթին...

—Հայրիկ, զէյթին կուզեմ։

—Օ՜․․ հիմակուընէ չը պաշլայենք, չէ նէ քեզ հիմա կառնեմ տուն կը տանիմ։

—Աստամ իլիշմէ պէ, չօճուգ տըր․ Մաննիկ դուն իմ քովս եկուր, հիմա զէյթին պիտի բերէ կուտես։

Գինեպանը օղիին շիշերն ու մէզէները բերելով սեղանին վրայ շարեց։

—Շիմտի էվտէ պիր խըռ չըգարաճագտըմ քի, ծօ աղբար․ մէնտիլը ձգեցի դուրս պիտի ելլամ, "ի՞նչ կայ քի աս ատեն հէմէն դուրս կիյնաս կոր" տէր։

—Աստամ սէնտէ․․․ գարը սէօզիւնէ գուլագ ասարսան ուճու պուլունմազ․․․ կենացդ։

—Անուշ․․․ ծօ ամա պիր խույլանտըմ քի․ գործդ մի մտմտաս, հոգնութիւնդ մի մտմտաս. չունա պադ, խըրս ըլա թիւթիւնի տէ էվտէ ունութտուդ․ պարոն Պետիկ, ինծի վաթուննոց բաքէթ մը առնել տայիր։

—Գլխուս վրայ։

—Հայրիկ, Փըստըխճին եկաւ, ինծի տասը բարայի Փըստըխ ա՛ռ։

—Հիմա թօխատը զարկածիս պէս թէքէր մէքէր կուգաս։

—Չօճուղուն եւուրէյինի գըրմա ատամ, մի լար աղջիկս․ կէլ պէ Փըստըգճը, օն բարալըգ Փըստըգ վէ՛ր։

—Երես մի՛ տար պէ՛․․․ կեցիր դուն, մէյմըն ալ քեզ հետս բերեմ նէ ես ալ մարդ չեմ։

—Վազ անցիր․․ աս տեղի ճիպըէն իրաւ աղւոր է եղեր։

—Ինչ կըսես կոր․ թէքմիլ խանութները պտըտիս նէ ույարը չես գտնար։

—Կենացդ․

—Անուշ։

—Պիտի խմեմ նէ պարէ ասանկը խմեմ... կամաց աղջիկս, քիչ մնաց Նարկիլէն տէվիրմիշ պիտի ընէիր։

—Քա բահալթ տեղ մը չը նստի՞ս։

—Հայրիկ, անցած գիշերուան պախշային պուճախը տար ինծի։

—Համկցայ․․․ հետս եկո նայիմ... նէ՞ եաբասըն գարտաշ, թաթլը պէլա։

—Գործդ նայէ․․․ Պարոն Պետիկ սա շիշէն լեցնէիր։

—Գլխուս վրայ։ Պապիկ աղան ո՞ւր է․ գնա՞ց.

—Չէ, չօճուխը պախճանտարաւ, հիմա կուգայ․ դուն անոր ալ շիշէն լեցուր։

Գինեպանը "շատ աղէկ" ըսելով մինչև որ շիշերը լեցուց բերաւ, Պապիկ աղան ալ փոքրիկ մանկիկին հետ վերադարձաւ։

—Հիմա սանկ քովս նստէ աղջիկս քի, տայ-տայը բահաթ նարկիլէն խմէ։

—Հայրիկ, արթըխ տուն երթանք։

—Չէ՛. . . ատանկ սըզբլթըներու պաշլայես նէ քեղ մէյմըն ալ հետս չեմ բերեր. սանկ մատ-մաղէլի պէս քովիկս նստէ նայիմ։

—Օղիդ չը խմե՞ս Պապիկ աղա.

—Բահաթ պրագը՞յօր քի իչէյիմ. կենացդ.

—Անուշ. ի՞նչ կըսես, մէյ մէկ պզտիկ չիչէ տահա լեցնել տա՞նք։

—Պզտիկը ի՛նչ է, թող ասոնք լեցնէ։

Օղիին չիչերը երրորդ անգամ լեցուեցան։ Փոքրիկ մանկիկն ալ նստած տեղը քնացեր էր։

—Պապիկ աղա, չօճուխին քունը տարեր է, արթնցուր, մեղք է։

—Չէ՛, չէ՛ թող քնանայ. խանութը տաք է, չը մսիր։ Պէ աղբար, տունը բահաթ չը կենար, հետս կառնեմ դուրս կելլամ, թամամ քի մէկ երկու հատ պիտի խմես, հայրիկ տուն երթանքա պաշլար, ուստա նա՞օրլ օյնաելըմ պիլմէմ։

Վերջապէս մեր Պապիկ աղան մինչև գիշերուան ժամը ութը խմելէ ետքը տատանելով ոտքի ելաւ ու բոլորովին մոռնալով որ աղջիկը կը քնանայ, մեկնելու համար դէպի դուռը քանի մը քայլ յառաջացաւ, բարեբաղդաբար բարեկամը զայն կեցնելով ըսաւ,

—Հէ՛յ, ո՞ւր բարով, չօճուխը հո՞ս պիտի թողուս.

—Վա՛յ, . . հիմա ասիկա ինտո՞ր արթնցնելու է. դուն սըվիկա ուսուլիկ մը շալակս կրնաս տալ

—Տամ ամա չելլաս կռնակէդ ձգես. գրկես նէ տահա աղէկ չը՞լլար։

—Գրկելը տահա զօռ է, դուն կռնակս տուր ըսելով, խեղճ տղեկը միշտ քնացած կռնակն առնելով քայլամոլոր տուն հասաւ.

Կինը դուռը բանալով ամուսնոյն վիճակը տեսնելուն՝ գոչեց.

—Վո՛յ խելք մը ունիմ, հիմա կը թռցուցնեմ. ինք խմեր խմեր, չօճուխս ալ գինովցուցեր է.

—Ա՛լ պէշ բարալըգտա պունտան. չօճուխին բախի խմ՛ցունողը ո՞վ է. մէյխանան քունը տարաւ նէ շալակս առի բերի։

—Վրան հալիկ չէ մնացեր, մէկն ալ պէտք է որ քեղ բերէ.

—Երկան լախբրաը չուղեր. սըվիկտ կռնակէս ա՛ռ, չէ նէ հիմա գետինը կը նետեմ.

Կինը անմիջապէս մանկիկը կռնակէն առնելով տարաւ տեղը հանգստացուց.

Այս տեսակ մատաղատի տղեկները դինետանց մէջ տեղի ունեցած անվայել խօսակցութիւնները մտիկ ընել տուող հայրերը պէտք է գիտնան որ իրենց զաւակացը ապագան կը սպաննե՛ն։

ՋՈՒԹԱԿ

ԳԸԹԸՐԻԶՄ

Ի՛քի ահպապլար

Պիրատէր, բիանքօ պիլէթի նիչի՞ն ալմազսըն.

—Էօյլէ չիյէ բարա վէրմէմ.

—Պահթընը բրօվա իթմէք իչիւն պիր տէֆա օլսուն ալմալըսըն.

—Պէն օ բրօվայը էթմիշ վէ ազդըմըն տատընը ալմըշըմ տըր.

—Նէ՞ վագըթ.

—Էվլէնտիղիմ վագըթ.

——

Փարասըզ ճօվինօնուն պիրի՝ պիր կիւն կայէթ աճըգմըշ օլուպ, պիր բարչա սիյահ էքմէք պուլուպ եէտիղի վագըթ քէնտի պիր թանըտըկընա թէսատիւֆ իսէր.

—Պիրատէ՛ր. նիչի՞ն լոգանթայա կիթմէյօրսուն.

—Սբճագ եէմէք միյտէմէ տօգունուպ հազմի կիւճ օլույօր.

—Էօյլէ իսկ պիր ազ սալամ, ժամպօն վէ եախօտ սիյահ հավեաբ եէսէն օլմա՞զ մը։

—Էվվէլտէն պէրի գարըշըդ չէյլէր եէյէմէմ.

—Էյ պու եէտիինիզ էքմէք չօգ սիյահ տըր, օնու նա՞օրլ հազմ իտէյօրսըն.

—Սիյահ էքմէք թաթլը օլուր տէտիլէր տէ՝ բրօվա իտէյօրըմ.

——

Կիւնտիւզ վագըթ ույուեանլար քիմլէ՞ր տիր.

—Պէլէտիյէ մէմուրլարը.

—Տօզրու թարթանլար քիմլէ՞ր տիր.

—Պագդալլար։ գասապլար վէ պալըգճըլար.

—Պէլէտիյէ մէմուրլարը նիչի՞ն անլէրին թէրազիլէրինէ տըդդաթ իթմէզլէր.

—Բաթէնթ թօփլամագտան վագըթ պուլամատըգլարը իչիւն.

——

—Աղբա՛ր, բէյրիզ կիւնիւ եումուրթա եէրսէն՝ բասկալեատա նէ՞ եէյլեճէքսին.

—Բասկալեայա գատար էօլիւրսէմ՝ ըինկա պալըղը կիպի եումուրթալը կիթմէլիյիմ ահրէթէ։

Ց. Ս.

——

ԹԵՐԹՕՆ «ՀԱՅԵԼԻ»Ի (9)

ՌԸՆԷ ՏԸ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ԿԱՐՄԻՐ–ՄԱՄՌԻԿԸ)

Զարամիտ արարածը անխլցուց նաև թէ Սօլ–Պրոթէ արդէն բնաւ իր ճաշակին համաձայն չէր գտներ իր մօրեղբօրորդին, թէ մինակ ինքը, Զուն, հրապուրած էր զայն, և մսավաճառը, կատարելապէս ապահովուած, նորէն իր յոյսերուն դարձաւ այն ատեն։

Իր երանութեան երազներուն մէջ մէկ բան մը կը մտատանջէր զինքը, իր դրացուհիին լռութիւնը։ Չէր հասկնար թէ անիկա ինչո՞ւ քանի մը տող չէր գրեր իրեն, թէ ինչո՞ւ բարեկամական նշաններ չէր ըներ պատուհանէն, ինչո՞ւ ո՛և է կերպով չէր յայտներ իր վրայ ունեցած հոգածութիւնը։

Նոյն իսկ որոշած էր լրջօրէն բացատրութիւն խնդրել Մէ–քուիէն, երբ սա, որ կարծես միշտ կը գուշակէր միտքէն անցածները, առտու մը մէկ կողմ առաւ զայն և ըսաւ.

—Օրիորդ Լիու չի կրնար ձեզի գրել, բայց այս գիշեր, ժամը երկուքին, երբ մեհեանին ծնծղաներն հնչեն, կամաց մը դրանը առջևէն անցէք և տեղեկութիւն պիտի առնէք անոր վրայօք։

Եւ խոյս տուաւ. նշան ընելով Զուի որ շատ խոհեմ ըլլայ, թողլով զայն երանութենէ և յոյսէ խելայեղ։

Այն օրն, յաճախորդները սիրալիր եւ հոգածու գտան զայն ինչպէս երբեմն։

Մինակ, սովորականէն շատ աւելի շուտ ճամբեց զանոնք, և հազիւ ժամը մէկն էր, նոր ածիլուած եւ տօնական զգեստներն հագած, արդէն պատրաստ էր ժամադրութեանը վազելու։

Հանդիսաւոր ժամը, որուն կը սպասէր, կարծես չէր գար։

Իր կիսաբաց դրան ետին կծկուած, նպաստաւոր վայրկեանին կը սպասէր, կանիծէր այն մարդերը որք, երթևեկելով, արգելք մը ըլլալ կը սպառնային իրեն, և հայհոյելով որ մեհեանին կոչնակահարն ուշ մնացած էր։

Վերջապէս մութը կոխեց, անոր հետ փողոցն ամայացաւ, և Զու, ենթադրելով որ բարեբաստ վայրկեանն հեռու չէր, պատին երկայնքը սահեցաւ՝ մութին մէջ ծածկուելու համար։

Հազիւ քանի մը վայրկեանէ ի վեր հոն էր, երբ ծնծղային առաջին հարուածը թնդաց։ Այն ատեն մեղմիւ յառաջացաւ, ականջ դնելով. վեր կառնէր գլուխը. զգաց որ երեսին վրայ կիյնար թեթև առարկայ մը զոր առաւ։

Յետոյ, թէև բոլորովին մինակ ըլլար փողոցին մէջ, խոյս տուաւ վազելով. իբր թէ գողութիւն մը գործած ըլլար։

Երկու հարիւր քայլ հեռուն կանգ առաւ բժիշկի մը դրան առջև, և կանանչ լապտերին լոյսովը —Չինաստանի մէջ բժիշկները պարտաւոր են գիշերը լապտեր վառել իրենց տանը առջև— կրցաւ քննել խորհրդաւոր առարկան։

Կը բաղկանար երկու վարդի կոկոնէ, մէկը ճերմակ, միւսը կարմիր, որք իրարու կապուած էին արծաթէ ժապաւէնով մը նման անոնց զորս իր պաշտեցեալը կը գործածէր կապելու համար իր սև մազերուն երկար հիւսքերը։

Այս տեսնելով, վիպական մսավաճառը քիչ մնաց որ խելքը թռցունէր։ Իրեն համար, այդ երկու վարդի կոկոններուն միացումը խորհրդանշան մըն էր լոկ, բոլորովին ամբիծ խոստովանութիւն մը իր սիրեցեալին կողմէ ուսկից ապահով էր հիմակ սիրուելուն։

Ուստի փութաց խանութ դառնալ, որպէս զի ուզածին պէս երազէ այն միջոցները զորս պէտք էր գործածէր՝ հաճելի երեւնալու համար օրիորդ Լիուի։

Երբ քնացաւ կէս գիշերին մօտ, իր ծրագիրը պատրաստած էր։ Յաջորդ օրն իսկ միտքը դրած էր դիմել քաղաքին ամենէն ճարպիկ միջնորդուհիին, Մէյ–Ժինին որ ամենէն դժուար ամուսնական ձեռնարկներն յաջողցնելուն համար ծանօթ էր։

Չինաստանի մէջ այսպէս կանուանին այն պառաւկիները որոնք ամուսնական գործերով միայն կը զբաղին։ Բնաւ ամուսնութիւն չըլլար առանց անոնց միջամտութեանը։ Երբ Մէյ–Ժինները թեկնածուներուն պայմանները ընդունել կուտան շահակից ընտանիքներէ իւրաքանչիւրին, այս վերջինք այն ատեն կը փոխանակեն առաջին այցերը։

Յանժամ ամեն մարդ կրնայ տեսնել մանկամարդ աղջիկը, բացի նշանածէն, որ ստիպուած է հաւատ ընծայել իր Մէյ–Ժինին գովեստներուն և իր ծնողացը երաշխիքներուն։

Բայց Զու պէտք չունէր Լիու–Սիուն տեսնելու. երկար ատենէ ի վեր կը ճանչնար անոր ժպիտը, գեղե-

ցին աչքերը, և Վարդ զանց չէր ըրած աւելի կատարեալ կերպով զանոնք իրեն նկարագրելու։

Ուստի շատերէ աւելի առաջացած էր ինք եւ իր խելքովն իրերը սովորականէն աւելի արագ պիտի քալէին, վասն զի պատրաստ էր իր հարստութեան կէսը զոհել՝ իր նշանածին ու անոր գեղեցկութեանը արժանի ընծաներ տալու համար։

Այս խոհերով առլի, արեւածագին բացաւ իր խանութը, ա՛լ մէկ նպատակ միայն ունենալով. իր ծրագիրներն հաղորդել Մէ-Քուիի և անմիջապէս գործի սկսիլ։

Դժբախտաբար ի զուր սպասեց մանկամարդ աղախինին, որ չեկաւ. բայց որովհետեւ որոշումն անդարձ կերպով տուած էր, գործը լմնցունելուն պէս հագուեցաւ։

Արդուզարդն աւարտելով, այսինքն հազիւ քսան վայրկեան ետքը, ուրախ զուարթ վար իջաւ եւ դուրս ցատքեց, դուռն իր ետեւէն քաշելով մեծադղորդ։

Բայց յանկարծ աչքերը խոշոր խոշոր բացուեցան, և երկար սրունգներուն վրայ դանդաչելով, մինչեւ պատըն ետ ընկրկեցաւ, նեցուկ մը փնտռելու համար հոն։

Անմիջապէս, ձեռքը ճակտին վրայէն անցունելէ ետք, կարծես ազատելու համար ցնորականութենէն որուն խաղալիկ ըլլալ կը կարծէր, մէկ ոստումով անցաւ փողոցէն և տիկին Լիուի տան սեմին վրայ հասնելով, կցկտուր աղաղակ մը արձակեց։

Դրան երկու կողմը կարդացած էր այն կարմիր ծանուցումը զոր, օրէնքին հնազանդելու համար, կը փակցունեն այն տան վրայ ուր հարսնիք մը տեղի կունենայ։

Նախ չուզեց հաւատալ, և ջանալով հանդարտիլ, երկրորդ անգամ կարդաց։ Բայց կարելի չէր տարակուսիլ։ Նշանած աղջկան անունը, ամուսնին անունը, ամուսնութեան օրը, այս ամէնը դուրս կը ժայթքէր պատէն՝ բոցանման գիրերով։

Իրաւ Լիու-Սիուն էր, որ պիտի ամուսնանար ուրիշի մը հետ որ՝ ինքը, Զուն չէր, որուն քիթին խնդացած էր ուրեմն։

Յուսավրէպին աչքերը արիւնով լեցուած էին, գըլուխը կը դառնար, շուրթերը կցկտուր բառեր կը մըրմըռային։

Յանկարծ, տարօրինակ կերպարանափոխում մը կատարուեցաւ դէմքին վրայ, ցցուեցաւ, արագ ակնարկ մը նետեց բոլորտիքը, և տեսնելով որ մէկը չի դիտեր զինքը, անմիջապէս հեռացաւ. յետոյ, շրջան մը ընելէ ետք, հանդարտ երեւոյթով խանութ դարձաւ, կարծես սովորական պտոյտէ մը դառնալու պէս։

Բայց մինակ մնալուն պէս, ազատ ասպարէզ տըւաւ իր բարկութեանը, եւ այդ փոքր սրահը, ուր արդէն մտցուցինք մեր ընթերցողները, այլանդակ տեսարանի մը թատերավայրն եղաւ։

Իր տօնական հագուստն հանելէ յետոյ, Զուն ձեռքն առած էր մսագործի լայն դանակ մը, զոր հաճոյք զգացած էր արեան մէջ թաթխելով։

Այս արիւնն ողողած էր իր դէմքը եւ արատած իր մերկ բազուկները եւ մոլեգին գրգռման մը ենթակայ, իր սպառնագին զէնքը կը դարձունէր դէպ ի տունն այն աղջկան զոր կամբաստանէր թէ զինքը խաբած է։

Ակնարկը մոլեգին էր, բերանը կը փրփրէր. ամենէն սոսկալի հայհոյանքներն ու ամենէն ահռելի ըսպառնալիքները կը տեղար։

Այլ եւս կոպիտ Զուն, սիրահար Զուն չէր. բիրտ մսագործն էր, քստմնելի Կարմիր-Մամուկը, վրիժառութեամբ ու արեամբ արբշիռ։

Սակայն քիչ քիչ հանդարտեցաւ։ Այն ատեն, աթոռի մը վրայ իյնալով, հոն կծկեցաւ՝ ծնօտը արիւնոտ ձեռքերուն մէջ և աչքերը կիսախուփ։

— —

(Շարունակելի)

Այս իրիկուան ուտելիք թռչունս ո՞ւր կրնամ գտնել։

Печатница „Взаимность“ — Варна